Հանձնարարել «ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մրցույթի հանձնաժողովի քարտուղար Մ. Պողոսյանին՝ 2018 թվականի փետրվարի 21-ին ժամը 12-ին հրավիրել հանձնաժողովի արտահերթ նիստ՝ 2018 թվականի փետրվարի 15-ի նիստի որոշումը վերայանայելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Գալստյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում անցկացվող մրցույթի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան *21.02.2018թ.*
Ժամը՝ 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ռ. Գալստյան*

Անդամներ *Ս. Գրիգորյան*

Լ. Մովսեսյան

Գ. Քոչարյան

Լ. Թազայան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Պողոսյան*

1. **«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մրցույթի հանձնաժողովի հայտերի բացման նիստի 2018 թ. փետրվարի 15-ի որոշումը վերանայելու վերաբերյալ.**

2018 թ փետրվարի 15-ի որոշումն ընդունելիս տեղի է ունեցել վրիպակ: Հիմք ընդունելով այն փաստը, որ ամենացածր գին առաջարկած մասնակիցը՝ Ա/Ձ Անուշ Պետրոսյանը հրավերի հավելված 8-ում վճարման պահանջագրի 7-րդ կետը՝ վճարողի ՀԾՎ-ն լրացրել է, այնինչ այդ կետը պետք է լրացվեր, եթե հայտը ներկայացվեր Ֆ/Ա-ի կողմից, մրցույթի հաղթող է ճանաչել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն:

Սակայն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» համաձայն տվյալ կետի լրացման պահանջը ներկայացված է «ոչ պարտադիր», հետևաբար ՀԾՀ-ի լրացված լինելը պետք էր համարել տրամադրված լրացուցիչ տեղեկատվություն, և չդիտել այն որպես մասնակցի հայտը մերժելու հիմք:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Հայտնաբերված թյուրիմացության ուղղման արդյունքում՝

«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/04/01» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին (կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

2. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտի հաջորդ աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվեն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկը և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

2.1 Մրցույթի մասնակիցներին ծանուցել հանձնաժողովի արտահերթ նիստի որոշման արդյունքները՝ մրցույթի վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի,օրվա և ժամի վերաբերյալ

Հաջորդ՝ **հայտերի գնահատման արդյունքների հաստատման և հրապարակման նիստը** ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետին համապատասխան տեղի կունենա ք.Երևան, Աբովյան 9 հասցեում՝ 2018 թվականի մարտի 2-ին, ժամը 11:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ռ. Գալստյան*

Անդամներ՝ ---------- *Ս. Գրիգորյան*

---------- *Լ. Մովսեսյան*

---------- Գ. Քոչարյան

---------- Լ. Թազայան

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Մ. Պողոսյան